ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ ՇՎՏՄ) ղեկավար Արմեն Կոտոլյանը, նույն մարմնի ղեկավարի տեղակալ Արթուր Մկրտչյանը և որակի ապահովման վարչության պետ Արարատ Սարգսյանը սույն թվականի նոյեմբերի 8-9-ը ուսումնական այցով գտնվել են Ֆրանսիայի Հանրապետության Փարիզ քաղաքում: Միջոցառումը կազմակերպվել է ԵՄ TAIEX ծրագրի շրջանակում (TAIEX Case ID INT MARKT IND/STUD 85189) ՇՎՏՄ-ի աշխատակիցների կողմից ոչ պարենային արտադրանքների շուկայի վերահսկողության ոլորտում ԵՄ լավագույն փորձի ուսումնասիրության նպատակով:

Այցի ընթացքում ՇՎՏՄ-ի աշխատակիցները այցելել են Ֆրանսիայի Մրցակցության, սպառողների հարցերի և խարդախության կանխարգելման գլխավոր տնօրինություն (այսուհետ ՄՍՀԽԿ) որը հանդիսանում է Ֆրանսիայում ոչ պարենային արտադրանքների շուկայի վերահսկողության ոլորտում գործունեություն ծավալող հիմնական կազմակերպություն:

ՇՎՏՄ աշխատակիցներին ներկայացվեցին ՄՍՀԽԿ-ի գործառույթները, խնդիրները և նպատակները: Մասնավորապես, ՄՍՀԽԿ-ն իրականացնում է՝

- Շուկայական մրցակցության կարգավորում,
- Սպառողների տնտեսական պաշտպանություն,
- Սպառողների անվտանգություն:

Արտադրանքի նկատմամբ շուկայի վերահսկողությունը իրականացվում է ՄՍՀԽԿ-ի ՍԴ5 վարչության կողմից որի ղեկավարը և տարբեր բաժինների մասնագետները ներկայացրին իրենց կողմից իրականացվող աշխատանքները: Մասնավորապես՝

- շուկայում ոչ պարենային ապրանքների մոնիտորինգ,
- ստուգումների ծրագրավորում - տարեկան ազգային ծրագիր,
- ռիսկերի գնահատում,
- ծրագրից դուրս ստուգումներ,
- ազգային առաջադրանքներ,
- RAPEX (Safety Gate) համակարգի կիրառում:

ՍԴ5-ի և ՇՎՏՄ-ի գործառույթները ներառյալ ստուգումների կազմակերպումը և իրականացումը մեծամասամբ նման են:

Ուշադրության են արժանի հետևյալ ասպեկտները՝

- ՍԴ5-ի կողմից կազմվող տարեկան ծրագրի կազմումը: Տարեկան ծրագիրը ներառում է միայն այն ոլորտները որոնք համարվում են ռիսկային, տարեկան ծրագրի հրապարակումը սահմանափակվում է միայն ոլորտների բացահայտմամբ, չեն նշվում տնտեսվարող սուբյեկտների անվանումները, ինչը բացատրվում է տնտեսվարողների կողմից իրենց բացթողումները թաքցնելու կանխարգելման նպատակով:

- Ստուգումների ընթացքում նմուշառման և լաբորատոր ախտորոշման ծախսերը հոգում է տնտեսվարողը սակայն եթե ախտորոշման արդյունքները համապատասխանում են կանոնակարգերի պահանջներին տնտեսվարողը ստանում է փոխհատուցում:

Հետաքրքրություն է նաև ներկայացնում Safty Gate համակարգը, որը բոլոր ԵՄ պետությունների հնարավորություն է տալիս կարճ ժամանակում տեղեկանալ և շուկայից հանել որևէ անդամ պետության շուկայի վերահսկողության մարմնի կողմից հայտնաբերված վտանգավոր արտադրանքը: Ֆրանսիական կողմը բարձր է գնահատում այս համակարգի հնարավորությունները:

Նպատակահարմար ենք գտնում իրականացնել համապատասխան օրենսդրական փոփոխություններ ՇՎՏՄ-ի աշխատանքներում վերը նշված մոտեցումների կիրառելու նպատակով: Մասնավորապես՝

1. Չհրապարակել ՇՎՏՄ տարեկան ծրագրում ստուգման ենթարկվող տնտեսվարող սուբյեկտների անվանումները,
2. Ստուգումների ընթացքում նմուշառման և լաբորատոր ախտորոշման ծախսերը վերապահել տնտեսվարող սուբյեկտներին, խախտման բացակայության դեպքում փոխհատուցման պայմանով:

Safty Gate համակարգի տեղեկատվությունը մեծ նշանակություն կարող է ունենալ ՇՎՏՄ-ի համար վտանգավոր արտադրանքների հայտնաբերման և շուկայահանման առումով: Նպատակահարմար ենք գտնում դիմել ԵՄ համապատասխան մարմիններին ընձեռնել ՇՎՏՄ-ին հնարավորություն նշված համակարգի տեղեկատվությանը ամբողջ ծավալով հասանելիություն ստանալու համար: